**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ձ.120**
**Ծածկագիրը՝ «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-26/25»**

ք. Երևան «12» 12 2025թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Վ. Չիլինգարյանի, որը գործում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ստեփանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Օդային քարտեզագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 26 400 000 (քսանվեց միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, քսան բանկային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արժեքական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և

դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս պահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[3]

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ք.Երևան-0042, «Ջվարթնոց» ՕԿ | «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ |
| Ի.Գասպարյան 33 | ք. Երևան, Արգիշտի փ. 11/12 շ. բն. 32 |
| Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ | «Էվոկաբանկ» ՓԲԸ |
| ԱՇԻԲ «Ջվարթնոց» մ/6 | Հ/Հ 1660030205900400 |
| ՀՎՀՀ 01216144 | ՀՎՀՀ 02830174 |
| **Գլխավոր տնօրեն** | |
| ______ Վ.Չիլինգարյան | ______ Ա. Ստեփանյան |
| *ստորագրություն* | (ստորագրություն) |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N*
*«12» 12 2025թ. կնքվա*
**ՀԱՆ-ԳՀԾՁԲ-26/25** *ծածկագրով N 2.120 պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրա

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | մատուցման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | ժամկետը** |
| 1 | 71351480/1 | տե՛ս հավելված 1.1 | դրամ | 26400000 | 1 | Տրամադրում է էլեկտրոնային կրիչների վրա(ընդունման-հանձման ակտով) և կապահովի դրանց տեղադրումը "Հայաէրոնավի գացիա" ՓԲԸ պաշտոնական կայքում ք. Երևան Գասպարյան 33, «Հայաէրոնավի գացիա» ՓԲԸ | 30.06.2026թ.-ը ներառյալ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
**Գլխավոր տնօրեն**

______________ **Վ.Չիլինգարյան**
*(ստորագրություն)*

**ԿԱՏԱՐՈՂ**

«Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փ. 11/12 շ. բն. 32
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660030205900400
ՀՎՀՀ 02830174

______________ Ա. Ստեփանյան
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 1.*
*« 12 » 12* **2025թ. կնքվա**
**ՀԱՆ-ԳՀԾՁԲ-26/25** ***ծածկագրով N 2.120 պայմանագրի***

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.Գնման առարկա են հանդիսանում Օդային քարտեզագրման ծառայությունների՝ Աերոնավիգացիոն քարտեզի (1:500000 մասշտաբի), Երևանի ,,Զվարթնոց" և Գյումրի " Շիրակ" օդանավակայանների սահմանափակող մակերևույթների (OLS) և էլեկտրոնային տեղանքի և խոչընդոտների (eATOC) ամբողջական մոդելավորման և թվային ներկայացման ծառայությունները:

**2. Տեխնիկական հատկանիշներ - 1:500 000 մասշտաբի Աերոնավիգացիոն քարտեզի**
Աերոնավիգացիոն քարտեզի ստեղծման նպատակն է ապահովել ԻԿԱՕ Հավելված 4-ի պահանջներին համապատասխան, բարձր որակի և ճշգրտության քարտեզ .pdf ֆորմատի, որը կարող է օգտագործվել ինչպես տպագիր, այնպես էլ էլեկտրոնային ձևաչափերով՝ հրապարակման և առցանց "Հայաէրոնավիգացի" ՓԲԸ-ի պաշտոնական կայքում դիտարկման և ներբեռնման համար:
Որպես օրինակ կարող է հանդիսանալ Լատվիայի Հանրապետության հրապարակած **VFR Chart 1:500 000 (Edition 14, 30 OCT 2025)** էլեկտրոնային քարտեզը, որը հասանելի է հետևյալ հղումով՝
https://ais.lgs.lv/uploads/fck/file/VFR%20charts/VFR_Chart_14th_edition_30OCT2025.pdf:

**2.1. Ընդհանուր պահանջներ**

- Քարտեզը պետք է համապատասխանի **ԻԿԱՕ Հավելված 4** և **ԻԿԱՕ փաս. 8697** պահանջներին:
- Մասշտաբ՝ **1:500 000**:
- Նշագրությունը, գույների համադրությունը և բոլոր սիմվոլները պետք է համապատասխանեն **ԻԿԱՕ Հավելված 4** –ի ստանդարտներին:
- Քարտեզը պետք է ներառի ամբողջ Հայաստանի օդային տարածքը՝ համապատասխան Թռիչքային տեղեկատվական գոտու (FIR) սահմաններով:

**2.2. Բովանդակություն**
Քարտեզը պետք է ներառի հետևյալ տվյալները.

- Օդանավակայաններ և դրանց ԻԿԱՕ կոդերը, ինչպես նաև չգործող օ/կ,
- Նավիգացիոն միջոցներ (DVOR/DME, NDB, ILS, GNSS waypoints),
- Օդային տարածքներ՝ CTR, TMA, ATZ, Danger/Restricted/Prohibited Areas,
- Տարածքային սահմաններ, գետեր, լճեր, ճանապարհային ցանց, քաղաքներ և կարևոր տեղագրական տարրեր,
- Տեղանքի բարձրությունը՝ հորիզոնական գծապատկերով (contours) և բացարձակ բարձրության գունային դիապազոնով:
- Մագնիսական շեղվածության տվյալները, ամսաթվի նշումով:
- Այլ աերոնավիգացիոն տեղեկատվություն համաձայն ԻԿԱՕ հավելված 4-ի:

**2.3. Տվյալների և համակարգերի պահանջներ**

- Տվյալների աղբյուրները պետք է ունենան պաշտոնական բնույթ՝ (ՔԱԿ, Հայաէրոնավիգացիա, DEM/SRTM մոդելներ….):
- Քարտեզը պետք է պատրաստվի **WGS-84** համակարգում:
- Պրոյեկցիայի տեսակ՝ ըստ տարածաշրջանի՝Lambert Conformal Conic (2 standard parallels) կամ Universal Transverse Mercator՝ ըստ տեխնիկական գնահատման:
- Քարտեզը պետք է պատրաստվի GIS հիմքով՝ (ESRI ArcGIS / QGIS և այլն):
- Արտահանման ֆորմատներ՝ **PDF (բարձր որակի)**

**2.4. Որակի ապահովում**

- Պետք է ապահովվի տվյալների ամբողջականության, ճշգրտության և վավերականության վերահսկում՝ ըստ ICAO Doc 10066 (PANS-AIM) պահանջների,

**2.5. Օգտագործման պահանջներ**
Քարտեզը պետք է նախատեսված լինի՝

- տպագրության (մինչև A0 չափերի, բարձր որակի),
- էլեկտրոնային հրապարակման (Web Viewer՝ փնտրման և խոշորացման հնարավորությամբ),
- Առցանց տարբերակում օգտվողը պետք է կարողանա կառավարել քարտեզը մոտեցնելով և հեռացնելով օգտագործելով zoom գործիքը՝ չազդելով քարտեզի ընթեռնելիության որակի վրա:

**3. Տեխնիկական հատկանիշներ - Երևանի ,,Զվարթնոց" և Գյումրի " Շիրակ" օդանավակայանների սահմանափակող մակերևույթների (OLS) և էլեկտրոնային տեղանքի և խոչընդոտների** (eATOC) **ամբողջական մոդելավորման և թվային ներկայացման**
Ստեղծել ԻԿԱՕ հավելված 14 հատոր I և ԻԿԱՕ Doc 9881 պահանջներին համապատասխան օդանավակայանների սահմանափակող մակերևույթների (OLS) և էլեկտրոնային տեղանքի և խոչընդոտների (eATOC) ամբողջական երկրատեղեկատվական համակարգ՝ եռաչափ (3D) մոդելավորմամբ, որը հնարավորություն կտա կառավարել, դիտարկել և վերլուծել տեղանքի և խոչընդոտների տարածական տվյալները՝ սահմանափակող մակերևույթների(OLS) համապատասխան տիրույթում:
Որպես օրինակ կարող է հանդիսանալ Լատվիայի Հանրապետության էԱՏԾ-ում հրապարակված eATOC բաժնի օրինակը:
**3.1. Ընդհանուր պահանջներ**

- Համապատասխանություն՝ **ԻԿԱՕ հավելված 14, հատոր I, և ԻԿԱՕ փաս. 9881**:
- Համակարգը ապահովում է **OLS մակերևույթների** ամբողջական մոդելավորում (Take-off, Approach, Transitional, Inner Horizontal, Conical, Inner Approach, Inner Transitional…),

- Տվյալները պետք է լինեն **WGS-84** համակարգում:
- Ճշգրտությունը համաձայն՝ ԻԿԱՕ 14 հավելվածի Terrain Data ≤ 1 մ (horizontal), Obstacle Height ≤ 0.5 մ (vertical) պահանջների:

**3.2. Տվյալների ինտեգրում**

- Տեղանքի տվյալների աղբյուր՝ LiDAR, Photogrammetry, կամ DEM/SRTM:
- Խոչընդոտների տվյալներ՝ "Հայաէրոնավիգացիա" ՓԲԸ:
- Տվյալները համատեղելի են **AIXM 5.1** կառուցվածքի հետ:

**3.3. Համակարգի ֆունկցիոնալություն**

- 3D դիտարկում՝ WebGL կամ CesiumJS միջավայրում,
- Շերտերի կառավարում՝ տեղանք, OLS, խոչընդոտ, բարձրություն, contours,
- Հնարավորություն՝ վարողի(օգտվողի) կողմից շերտերի միացում/անջատում, խոշորացում, չափումներ,
- Տվյալների արտահանում՝ csv ձևաչափերով,
- Օգտագործման ինտերֆեյս՝ անգլերեն,

**3.4. Տվյալների անվտանգություն և պահպանում**

- Բացառվում է տվյալների կրկնօրինակումը և ապահովվի տարբերակի կառավարում(version control),
- Հասանելիություն՝ ապահովվում է սահմանափակ իրավունքներով դիտում և խմբագրում,

**3.5. Որակի և կառավարման համակարգ**

- Պարտադիր է **ISO 9001:2015 (Quality Management System)** սերտիֆիկացում,
- Նախընտրելի է ունենալ eATOC կամ OLS համակարգերի փորձ առնվազն մեկ ազգային Աերոնավիգացիոն սպասարկող կազմակերպությունում կամ Քաղաքացիական ավիացիայի ոլորտում,
- Ներկայացվում է սպասարկման ծրագիր՝ ոչ պակաս, քան **12 ամիս տեխնիկական աջակցությամբ, այնուհետև "Հայաէրոնավիգացիա" ՓԲԸ մեկ աշխատակցի ուսուցում վարման իրավունքը փոխանցելու** համար:

**4. Երաշխիքային սպասարկում և պայմաններ**

**Թարմացումներ**

Եթե 2-րդ և 3-րդ կետերում նկարագրված քարտեզի և eATOC համակարգի թարմացում առկա է, պետք է ապահովվի թարմացում մատակարարի կողմից 12 ամիս:

Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մոդելի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտություն չկա:

**6. Ծառայությունների մատուցման պայմանները**

Աերոնավիգացիոն քարտեզի (1:500000 մասշտաբի), Երևանի ,,Զվարթնոց" և Գյումրի " Շիրակ" օդանավակայանների սահմանափակող մակերևույթների (OLS) և էլեկտրոնային տեղանքի և խոչընդոտների (eATOC) ամբողջական մոդելավորման և թվային ներկայացման համակարգը կհամարվի մատակարարված, երբ Մատակարարը վերոնշյալ համակարգը կտրամադրի էլեկտրոնային կրիչների վրա(ընդունման-հանձնման ակտով) և կապահովի դրանց տեղադրումը "Հայաէրոնավիգացիա" ՓԲԸ պաշտոնական կայքում:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ | «Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ |
| Ի.Գասպարյան 33 | ք. Երևան, Արգիշտի փ. 11/12 շ. բն. 32 |
| Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ | «Էվոկաբանկ» ՓԲԸ |
| ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ | Հ/Հ 1660030205900400 |
| ՀՎՀՀ 01216144 | ՀՎՀՀ 02830174 |
| **Գլխավոր տնօրեն** | |
| ________ Վ.Զիլինգարյան | Ա. Ստեփանյան |
| *ստորագրություն* | (ստորագրություն) |
| | Կ.Տ |

*Հավելված N 2*
*« 12 » 12 2025թ. կնքված*
*ՀԱՆ-ԳՀԾՁԲ-26/25 ծածկագրով N 2.120 պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | |
| | | | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | |
| 1 | 71351480/1 | Օդային քարտեզագրման ծառայություններ | 26400000 | 26400000 | 26400000 | 26400000 | 26400000 | 26400000 | 26400000 | |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
**Գլխավոր տնօրեն**

________ **Վ.Չիլինգարյան**
*ստորագրություն*

**ԿԱՏԱՐՈՂ**

«Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փ. 11/12 շ. բն. 32
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660030205900400
ՀՎՀՀ 02830174

________ Ա. Ստեփանյան
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված 3*
*«12» 12 20 թ. կնքված*
*N 2.120 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| հվհհ ___________________ | հվհհ ___________________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«    » «            » 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «    » «            » 20    թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« 12 » 12 20 թ. կնքված*
*N2.120 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________
ազգանուն, անուն

________________________
ստորագրություն